

378

2571

891.71
E-17

~~378~~

132

30 OCT 2006

25 NOV 2010

ԵԱՀԱՅԱԿԱՆ

451c

1891-74

4-17 up

No. I

1009
5401



Թարգմ

ՎԱՀԱՆ ԱԶԱՏՅԱՆ

Տպարան
Եղբ. Թաւարթկիլաձէլ
1902



Էրն-Ալ-Նաման սէլիդը փայտի չոր ճիւ-
ղերը գցեց խարոյկի մէջ և սկսեց.—

Հինաւուրց, ժամանակների խորքում ան-
հետ կորած, նախակին դարերում, Ասիայում
ապրում էր մի հզօր թագաւոր: Դեռ պատա-
նի ժամանակ նա իւր նախնիքների գահը նըս-
տեց՝ իւր ժողովուրդը բարդաւոր դարձնելու
ջերմ ցանկութեամբ լցուած,—նա ուզում էր,
որ իւր լայնատարած տէրութեան սահմաննե-
րում, ծովից մինչև ծով, մարդիկ մօռանային,
թէ ինչ է տանջանքը, վիշտը, արցունքը... Նա
հողագործից վաղ էր վեր կենում և պարկում
էր բնելու բոլորից յետոյ և իւր ամբողջ ժա-
մանակը նուրիրում էր ժողովրդին բարեկեցիկ
դարձնելու հոգատարութեան: Բայց տարին ան-
ցնում էր տարիի ետելից, իսկ այն նպատակը,
որը իր համար դըն էր բարի թագաւորը, ա-
ռաջուայ պէս անսահման հեռու էր երեսում.—
Եթէ որ նորան չարչարանքով յաջողւում էր բար-
ոքել մարդկանց դրութիւնը մի բանում, նա
փատանում էր միւսում—չարը չէր թողնում
յաղթել իրան և, անսպասելի կերպով փոխե-
րով ձեր, կատաղի կռուարարի պէս խուսա-
փում էր նորա հալածանքից: Պէտք էր նորից
կռուել, կռուել անվերջ և անհետեանք:—Չը
փոխուեց վիշտը, կարեքը, չը դադարեցին ար-

Дозв. ценз. Тифлисъ, 21-го декабря 1903 года

ցունքներ հոսել տէրութեան մէջ՝ չը նայած
թագաւորի ամբողջ աշխատանքին, և թագա-
ւորը թուլացաւ այդ անզօր կռուի մէջ ու
տրտմեց... Նորա կանայք և պալատականները
ի զուր էին աշխատում զրադեցնել նորան
բենգալեան վագրերի և ուժեղ վկերի որսոր-
դութեամբ, պարողուհիների պարերով, պա-
տերազմով,—տխոնւր էր թագաւորը.—Նորա
բարի սիրաը ցաւում էր ժողովրդի տանջան-
քով և այն գիտակցութիւնից, որ նա անզօր
է նրան օդնելու:

Նորա հրամանով նորա պետութեան բո-
լոր ծալրերից կանչուեցին խելօք ծերունիները
թագաւորի մօտ խորհրդի, և նոր աշխոյժով թա-
գաւորը դիմեց գործին: Ծերունիների հետ մի-
ասին քննում էր նա իւր տէրութեան բո-
լոր գործերը. Նոր օրէնքներ էր հրամարա-
կում, սատուգում էր, թէ ինչպէս են նորա ներ-
գործում իրանց տեղերում, և եթէ նրանք վաս
էին ներգործում, փոխաւմ էր նրանց և հրա-
մարակում էր միշտ նոր և աւելի լաւ օրէնք-
ներ, ինչպէս նորան այդ թւում էր. ինքը ծե-
րունիների հետ միասին արդալ ադատութեան
ատեան կազմեց, իւր ամբողջ տէրութեան մէջ
ինքն էր հսկում իւր սատրագրեալների վրա,
որոնց յանձնուած էր խստիւ վերահասու լինել
թագաւորական օրէնքների կատարմանը: Նա
թողեց պատերազմները, թողեց սիրեցեալ կա-
նանց, թողեց բոլոր զուարճութիւնները և ամ-
բողջովին նուիրուեց ազնիւ աշխատանքին՝

մարդկանց օգտի համար: Եւ անդաղրում աշ-
խատանքի, մշտական հոգսերի մէջ, թագաւո-
րը չի էլ նկատեց, թէ ինչպէս անցան տարի-
ները և ինչպէս նա ծերացաւ: Նորա՝ մտքերով
լի գուլխը, արդէն սպիտակած էր, ինչպէս լեռ-
ների գագաթների ձիւնը. երկայն, արծաթեայ
միրուքը փոռւած էր լայն, հզօր կրծքի վրայ,
որի մէջ առաջուայ պէս պատանեկական ջեր-
մութեամբ բարախում էր սիրով լի սիրաը և
ժամանակ առ ժամանակ նորոգւում էր ծանր
վիշտը: Եւ աւելի ու աւելի էր նա լցում ծե-
րունի թագաւորի հոգու մէջ, քանի որ տես-
նում էր, և չէր կարող չը տեսնել, չէր կարող
իրենից թագցնել, որ նորա աշխատանքը յամե-
նայն դեպս չի հասցնում ցանկացած նպատա-
կին.—Նորա պետութիւնը մեծ էր, հզօր և ան-
խորտակելի, նորա բնակիչների հարատութեան
համբաւը հնչնում էր ամէն տեղ, գեղարուեսար
և կիտութիւնը հասել էին անսովոր զարգաց-
ման. բայց թագաւորը հասկանում էր, որ այդ
ամէնը չէ, որ այդ քիչ է, որ գորանում չէ եր-
ջանկութիւնը, որովհետև գեռ հոսում էին մարդ-
կանց արիւնը և արցունքը նորա տէրութեան
մէջ և չէին դադարում նորանց տանջանքները...
Բայց ալեոր թագաւորը չէր ցանկանում իրան
յաղթուած համարել, և լարեց իր բոլոր ոյժերը,
որպէս զի հասնէ որոշած նպատակին, և նորա
այս կռւում գործ գրած վերջին ոյժերից մեծ
մասը տանջանք էր, տարակոյս էր, նեղումն..,
երբեմն նորան թւում էր, որ իր հրամաններ

կատարողները, իր պաշտօնեաները, բաւական, լաւ չեն ընտրուած, և նա փոխում էր նորանց, նշանակում էր նորերը, որպէս զի դարձեալ նրանցը ևս փոխարինէ նորերով կամ նոյն իսկ ծերերով. մէկ էլ կարծում էր նա, որ չափա- զանց թոյլ է պատժուում օրինագանցութիւնը, մէկ էլ, ընդհակառակը, այդ օրէնքը նորան շաս, խիստ էր երեսում թոյլ մարդկանց վերաբեր- մամբ. մէկ թւում էր նորան, որ անհրաժեշտ, է օրէնքով նախատեսել մարդկանց ամեն մի քայլը, ամեն մի շունչը, մէկ էլ, ընդհակառակը, կարծում էր նա, որ չափազանց շատ օրէնքներ կան նորա երկրում, չափազանց շատ պատժող, ներ, չափազանց շատ բանտեր... Նա իր բո- լոր միջոցները փորձեց գործ դնել, որպէս զի գուրս գայ այդ դժուար գրութիւնից և նորա, նից գուրս բերէ իրեն յանձնուած միլիօնաւոյ մարդկանց. նա ամբողջ գիշերներ անգուն էլ անցկացնում, մտածում էր այն բանի մասին, թէ ինչ պէտքէ անէ ինքը. Փրկութիւն էլ որոնում, բայց ոչինչ շէր գտնում: Եւ ժամա, նակ առ ժամանակ նորան սկսում էր թւալ. ու չուրիքը մարդկանց՝ միմիանց հետ ունեցած յա, ըարերութիւնների աէսակէտից և նորանից բըղ, խած նորանց տանջանքները անխուսափելի են, որ չը կան ու չը կան այնպիսի օրէնքներ, ու ընք կարողանային մարդկանց կեանքը ուրախ, դարձնել... Բայց մի ինչ որ բան թագաւորի հոգու մէջ բողոքում էր այս եզրակացութեան, դէմ և դրդնում էր նորան նորից բննութեան,

և նթարկել իւր մոքերը, նորից և նորից որոնել... Իսկ տարիները անցնում էին... Մահը հեռու չէր... Այն միտքը, որ ինքը այդպէս էլ կըգնայ, փրկութիւն չը գտնելով մարդկանց համար, անտանելի կերպով տանջում էր ալեոր թագաւորի միրար. բայց նա չըգիտէր՝ ինչ անել... Եւ յուսահատութեան մէջ նա թողեց յանկարծ իւր բոլոր գործերը և, ջարդուած, հիւանդ, փակուեց իւր՝ քաղաքից գուրս գտըն- ուած պարատում, որպէս զի գոնէ միքի հան- գատանայ իրան տանջող մոքերից և հոգակերից լեռների ու անտառների վայրի գեղեցիկու- թեան մէջ, որոնք լըջապատում էին նորա մարմարեայ պալատը...

II

Լուս գիշեր էր... Անքնութիւնից խոն- ջացած՝ ծերունի թագաւորը վեր կացաւ ան- կողնից և կամաց գուրս զնաց իւր պալատի առջև գտնուած ընդարձակ հրապարակը: Մար- մարեայ հզօր միւները, անմոռունչ անտառով շրջապատուած, լուսնի փայլի տակ արծա- թեայ էին երեսում... Ակնոր թագաւորը ընկաւ խաղաղ, փափուկ մահճի վրայ և, ծանը հոգոց հանելով, նայեց անվերջ այգու մութ խորքը՝ լի ծառերի խռովեալ, հազիւ լսելի շուկով և մառախուղի՝ մէջ գտնուած չերեցող շատրուան- ների ըիւրեղեայ խորհրդաւոր թոթովանքով: Իսկ ընդարձակ այգու մէջ գտնուած մուայլ ծովակի վրայ արծաթափայլում էր երկնի ան-

դունդը, որի խորքում ընկղմում էր զմայլեցընող լուսինը, և փայլվող աստղերը պատմում էին նիբհած երկրին ինչոր արծաթեայ, մաքուր հեքիսթներ... Հրապարակի մօտ, վարդերի մէջ գտնուած բարեշուք ջրուէժում, ինչոր բանի մասին երգում էր կանաչի թագաւորութեան չերեցող բանաստեղծը՝ ճպուռը, և ծերունի թագաւորին թուաց, որ ճպուռը ինչոր բանով երջանիկ է...

Եւ ալեոր թագաւորը նորից խորը, ծանր հառաջեց... Կամացուկ յետ տանելով էր սպիտակած գլուխը, նա բարձրացրեց աչքերը դէպի փայլատակող երկինքը և տեղափոխում էր նոցա (աչքերը) մէկ աստղից միւսը, կարծես աշխատում էր ականջ դնել, գուշակել նորանց ուռ, խորհրդաւոր թոթովանքը։ Եւ կամացուկ, աննկատելի կերպով նորա սև մտքերը անհետանում էին ինչոր տեղ, կարծես հալում էին արծաթափայլ ճառագայթների մէջ, և ինչոր անսահման—խաղաղ, հանդիսաւոր, պարզ բան էր երկնքից լցւում ծերունու դադրած հոգու մէջ, ինչոր բախտաւորութեան, ինչոր ծաղկող, հոտաւէտ գարնան թարմութեան պէս մի բան էր սկսում բուրալ նրանից... Եւ յանկարծ, նրա ուշաւում վալուեց մի ինչոր անառարկայական, մաքուր սէր... Ում համար, ինչի համար... Դէպի այդ հեռաւոր աստղերը, դէպ. այդ հին ծառերը, դէպ այդ փսփացները ու շղկները, դէպ այդ բաղդաւոր փոքրիկ ճպուռը, դէպ այդ ամբողջ

երկինքը, դէպ ամբողջ կեանքը, դէպ ամբողջ աշխարհը և մէկ էլ դէպ ինչոր չզօրը՝ քան ամբողջ տիեզերը, և դէպ ինչոր մեծ, հասկանալի ու սրախն մօտիկ՝ աստղերից դէնը գտնուող Գաղտնիքը... Եւ յուզուած, գրգռուած այս՝ ամէն բան ընդգրկող անհասկանալի սիրոց, այդ Գաղտնիքի մօտիկութիւնից, ծերունի թագաւորը, արցունքը աչքերին, նայում էր աստղերին, հեռաւոր անտառի մթութեան, ամփերի մուայլ քարաւաններով ծածկուած բարձր լեռներին, լուսմ էր կեանքի լուս, խորհրդաւոր զարկը իւր շուրջը, նորա զօրաւոր պտոյար աստղերի անթիւ շրջանների միջև, և իւրեն զգաց անսահման բաղդաւոր և պարզ, իւրեն զգաց այնպէս, ինչպէս այդ խաղաղ, մեղմ երկինքը, որ հեզութեամբ և սիրով զրկում է նիբհած երկիրը։ Եւ այնպէս, ինչպէս որ երկնքին, նորան այժմ հեռու, անպէտք և տարօրինակ երեացին կեանքի բոլոր փոթորիկները և ալէկոծութիւնները։ Նա այժմ հասկանում էր, որ այդ իսկական կեանքը չէ, որ այդ ծանր քուն է, խարեւայութիւն է, որ կայ մի այլ, խկական, լուսաւոր կեանք, որը նորան կոչում էր... Եւ նրա հոգու մէջ սէրը աւելի ու աւելի էր սկսում բորբոքուել, —աստղերի աշխարհում նա զգաց, որ նա սիրում է, անսահման սիրում է ամէն ինչ և որ ամէն բան—այդ աստղերը, այդ երկինքը, ցողաւէտ ծաղկների մէջ գտնուող այդ ճպուռը, այդ լեռները—անսահման սիրում են նորան, տան-

ջուռող, ծերունի թագտուորին, և նա դադարեց իրեն առանձին էակ զգալուց և որպէս ալիք, որպէս կաթիլ, ի մի ձուրուեց այդ անսահման սիրոյ ծովի ու մեծ, ասաղերից դէնը դտնուող հարազատ գաղտնիքի հետ, իբրև լուսաւոր և անսահման սիրուդ...

Երջանկութեան հառաչը դուրս արծաւ ծերունի թագաւորի կրծքից և, զարթնելով նա գերադարձաւ անդրաստեղեան շրջաններից դէպի երկիր, — վերադարձաւ մի ինչ-որ նորութիւնով. նորա օրտում այրուող կրակը — զգում էր նա — մի ինչ-որ մեծ ճշմարտութեան արշալոյս էր, որը ահա շուտով կը լուսաւորէ նորան...

Սէրը...

Նա սիրում է ամէն բան և ամէն բան սիրում է նորան... Ամէն ինչ սիրում է, ամէն ինչ — կէս գիշերային խաղաղութեան մէջ, վերեկի գաղտնեքի լուսաւոր սեղանի առաջ... Եւ այդ՝ ամէն բան պարունակող սիրոյ մէջ, այդ՝ աստղերին և գաղտնեքին մօտիկութեան մէջ է ամերող կեանքը, — միայն այդ է բախտաւորութիւն տալիս, միմիայն այդ, ուրեմն և կարեոր ու հարկաւոր...

III

Հետեւալ տօն օրը, փողերի հանդիսաւոր ձայների ներքոյ, շքեղ մայրաքաղաքի բուրու հրապարակներում և փողցներում, գերուգները կարգում էին ժողովրդին ծերունի թագաւորի հրովարտակը:

«Թագաւորը մի իմաստուն երազ է տեսել, — կարգում էին գերուղները, — որ նորա տէրութեան օրէնքների մէջ մօտիկ ապագաւում կարեոր փոփոխութիւններ պէտք է արուին: Թէ ինչպէս պէտք է լինեն այդ անցքերը, որոնք թագնուած են ապագայի որովայնում, կ'իմանայ միայն նա, — այսպէս է տեսել երազում թագաւորը — ով կը կարողանայ գուշակել գիշերային երկնքի ոսկեղէն գրերի խորհրդաւոր իմաստը: Դորա համար թագաւորը հրամայում է բոլորին և իւրաքանչիւրին, որոնք գտնելում են նորա թագաւորութեան սահմաններում, ծովից մինչև ծով, ամէն երեկոյ, արեի մայր մտնելուց մինչև կէս գիշեր, ուշադրութեամբ դիտել երկինքը և աշխատել մեկնել նորա գաղտնիքը: Այն առաջինը, ով թագաւորին կը մեկնի այդ գաղտնիքը՝ կը վարձատրուի այնպէս, ինչպէս ինքն այդ կը ցանկանայ: Թագաւորի կամքը պարաւորեցուցիչ է բոլորի համար, — կարդում էին գերուղները: — Թող երեկոյեան աղօթիք յետոյ բոլորը, բոլորը մինչև ամենավերջինը գուրս գան տներից և գուշակեն աստղերի գաղտնիքը. թող գուրս գան բանտարկեալները և նորանց պահապանները, քուրմերը, զինորականները, հարուստ վաճառականները, նշանաւոր իշխանները և հողագործները, աղջիկները, ծերերը, պատանիները, մայրերը՝ ծծկեր մասուկներով և նոյն իսկ հիւնդները, որոնք գեռ շարժուել են կարողանում, — բոլորը, բոլորը մինչեւ ամենավերջինը»...

Փողերը նորից բարձրաձայն հնչեցին և
գերոլդները վերագրածան մարմարեայ պալա-
տը, որպէս զի արագընթաց ձիերով խսկոյն
գնան բոլոր քաղաքները, աւանները և նոյն
իսկ ամենափոքրիկ գիւղերը—մեծ թագաւորի
կամքը յայտնելու...

Թագաւորի իմաստուն երազից աղմկուած՝
ժողովուրդը յուլուած ցրուեց աներում և, երբ
փայլուն արեգակը հազիւ թագնուեց հեռաւոր
կապոյա լեռների ետեսւմ, բոլորը գուրս թա-
գուեցին փողոցները, այգիները, իրանց տնե-
րի հարթ կտուբները, որպէս զի շուտանկ իմա-
նան երկնքից, թէ ինչ է թագնուած ապագա-
յի մէջ: Եւ իսկոյն, թագաւորի հրամանով, մայ-
րագաղաքի մութ փողոցներով բոլոր կողմերը
զնացին առանձին լիազօրներ, որոնց հրամա-
յել էր թագաւորը հսկել ժողովրդի վրայ՝—
արդեօք չէ բնել որեէ ծոյլի մէկը կամ ան-
տարբերը՝ դէպ թագաւորական պարգեր և
իւր երկը բախտը...

Թաղաղութիւնը տիրում էր թագաւորի
անսահման մայրաքաղաքում: Կապոյա մասա-
խուղի մէջ լսում էին միայն շնչառութիւնը և
հանդարդ հոգոցները այն հազարաւոր մարդ-
կանց, որոնք աչքերով մեխուել էին տիեզերքի
փայլվող անդունդքից... Եւ թւում էր ինչ-որ
արծաթեայ, պարզ, խօսական երեսյթներ էին
թռչում անմոռունչ կոյտերի վրայով և երկնի
շնչառութեան ներքոյ բացուած հոգիների մէջ
ինչ-որ մռայլ, բայց գեղեցիկ մտքեր էին շաղ

տալիս... Իսկ սպիտակ մարմարեայ պալատը ա-
մէն կողմից շրջապատող բնդարձակ անտառի
խորում անշարժ կանգնած էր մի ուրուական
և արմաւի ճիւղերի արանքներից նայում էր դէ-
պի երկինք, և երեմն, խորը, ընդհատուած
հառաչանքով, տիրող մթութեան մէջ լսում էր
ծերունու հանդարտ փափոցը.

— Մէծ, Ամենակարնդ Աստուած, խղճա-
սրանց, յայտնիր սրանց քո կամքը...

Կէս գիշերի մօտ, թագաւորազն իշխան-
ները վերագրածան պալատ և յայտնեցին թա-
գաւորին, որ ամբողջ ժողովուրդը, իւրաքանչիւր
մարդ, կատարեց նորա հրամանը, բայց երկրն-
քի դադանիքը ոչ ոք չը մեկնեց:

Թագաւորը արձակեց նրանց և, մենակ
մնալով, կրկին բարձրացրեց տշքերը դէպի
փայլատակող երկինքը և լուռ տանջանքով փըս-
փաց.

— Բայց միթէ չեն կարող հասկանալ...
Խղճա սրանց, Ամենակարնդ Աստուած

IV

Առաւօտեան, քաղաքապետը՝ թագաւո-
րին յայտնեց, որ բանտից անյայտացել է բան-
տապահներից մէկը: Հազիւ էր բարձրացել ա-
րեգակը, երբ նա մօտեցաւ իր պահապան ըն-
կերներից մէկին և, ասկելով, որ ինքը այլիս
չէ ուզում բանտապահ լինել, տուել է նորան
իր զէնքը և փախել է յալտնի չէ թէ ուր...
Ասում են, որ նրան արդէն տեսել են բաղ-

քի պարիսպների միւս կողմում,—նա գնացել է պէտի հեռաւոր անտառները...

Ծերունի թագաւորի սիրաը ինչոր բանից վառուելով արագ բարախեց, և նա ասաց,
—Այդ լաւ է...

Մի քիչ զարմացած՝ քաղաքապետը հարցըրեց.

—Մեծ թագաւորը կըհրամայէ կարգադրել ձիաւորներ ուղարկել նորա ետից ընկնելու:

—Ո՞չ. հարկաւոր չէ,—պատասխանեց թագաւորը, և, միշտ պնդերով զարմացած քաղաքապետին, որ զիշերը հասնելուն պէս բոլորը դարձեալ դուրս գան երկինքը նայելու, արձակեց նորան:

Ապշած մինիստրը գլուխ տուեց և դուրս գնաց, իսկ թագաւորը լսեց միւս պաշտօնեանների և մինիստրների զեկուցումները և, հանդապանալով, գնաց գաղասանական գահին. —աւելի ծանր յանցաւորներին նա միշտ ինքն էր դատում:

Պահապանները խոնարհ գլուխ տուին թագաւորին, նա նստեց իւր բարձր, ոսկեայ գահը և նշան արեց: Պահապանները կողքի դռնից ներս բերին մի շղթայակալ գունատ մարդու:

Այդ մարդը, ի զարմանս բոլոր ներկայ եղողների, երեսաց, թագաւորի խօսքերի համեմատ, շատ բարի և շատ լաւ մարդ, թէ կատաղութեան բուլէին նա սպանել էր հարազատ

եղբօրը... Թագաւորը հրամայեց արձակել նորան...

Այսպէս արձակեց նա առանց պատժելու բոլոր այն յանցաւորներին, որոնք դատում էին այդ օրը. հրամայեց նորանց բոլորին կերպել և հոգալ նրանց բոլոր պէտքերը: Յետոյ նա գնաց իր առանձնասենեակում հանգստանալու:

Իսկ զիշերը, այն ժամանակ, երբ հազարաւոր մարդիկ աշխատում էին մեկնել երկնքի ոսկեղէն զբերի իմաստը, մութ այդու խորըում նորից լսուեց ջերմագին աղօթք.

—Մեծ, Ամենակարող Աստուած, խղճամբանց, յայտնիր սրանց Քո կամքը...

V

Այսպէս անցաւ մի, երկու շաբաթ, և քաղաքի կեանքի մէջ սկսուեց մի նոր բան նըկատուել—մարդիկ ման էին գալիս կենդրոնացած, մտքերի մէջ խորասուզուած, և նոցամիմիանց հետ ունեցած հարաբերութիւնների մէջ այժմ նկատում էր մի տեսակ մեղմութիւն.. Եւ այդ ժամանակ մարդկային հոգիների այդ խաղաղութեան մէջ տեսնուում էր մի ինչոր անհանդասութիւն, ինչոր վրդովուած յուզմունք,—բոլորը կարծես թէ սպասում լինէին մի բանի...

Թագաւորը հին, աւանդական սովորութեան համեմատ, ամեն օր շրջում էր քաղաքը, այժմ գերադասելով քաղաքի աւելի առքատ թա-

զերը: Այստեղ նա շատ փող էր տալիս չունեւողներին. մէկ պառաւ կնոջ վերադարձրեց նորա զինուորական օրգուն, որը կերակրում էր մօրը իւր աշխատանքով. հրամայեց իւր բժիշկներին այցելել աղքատ հիւանդներին. մեծ խընամքով էր վերաբերում դէպի փոքր երեխաները, և այսպէս մի քանի օրուայ ընթացքում իւր շրուդը ստեղծեց սիրոյ ջերմ և լուսաւոր մթնոլորտ...

Մի քանի կալանաւորներ համարեա թէ
բոլորի աշքի առաջ գնացին բանտից և ոչ ոք
չէր աշխատում նոյնիսկ կանգնեցնել նորանց.
մի հարուսա իշխան իւր բոլոր կարողութիւնը
բաժանեց աղքանեցին, իսկ ինքը թագնուեց
մի տեղ: Մի նշանաւոր, խելօք ծերունի, որը
իւր բոլոր կեանքում առլորեցրել էր մարդկանց,
որ նոքա հողից ևն ստեղծուած և էլի հող են
դաւնալու, և որը խորհուրդ էր տալիս նոցա
լայն կերպով օգտուել իրանց կարճատե/կեան-
քի զուարձութիւններից,—ամէնքի համար
անսպասելի կերպով իւր զիտութիւնը կեղծ
յայտարարեց.—աստղերի լուսաւորութեան ժա-
մանակ նա նկատեց, որ մարդու մէջ, բացի
մարմնից, կայ և մի այլ բան: “Նոյն իսկ՝ եր-
կինքը ուստ մնասիրող աստղագէտների խօս-
քով մարդու մէջ կայ ամէն բան, ինչ որ
միայն կարելի է ուսումնասիրել, և այժմ նորա
էլ խօսութիւննեցին, որ լուսաւոր մօլորակնե-
րի հէնց ամենակարենօր գաղտնիքը, որը նոքա
այժմ զգացին, ամբողջովին չեն էլ քննելու...

իսկ վրդովուած յուզմունքը—ինչոք
բանի սպասելը—սաստկանում էր...

Թագաւորական պաշտօնեանեքը, որպէս
հոկում էին այն բանի վրայ, որպէս զի երե-
կոնիքը բարորը գետի երկինքը նայեն, սակաւ
և սակաւ էին իրանց գեկուցումներով թագաւ-
որքի աջքին երեսում։ Մէկ անգամ գիշերը թա-
գաւորը աննկատելի կերպով ռուս դնաց պա-
լտահից, որպէս զի տեսնէ, թէ ինչպէս ևն նո-
քա իրանց պարտականութիւննեքը կասարում
և նորանց բոլորին գտաւ քաղաքի փողոցնե-
լում, բայց նորա կարծես մօռացել էին այն
բանի մասին, որը նրանց յանձնաբարուած էր,
և, խառնուելով անմռունչ ամրութին, խոր մը-
տածողութեան մէջ նայում էին ասացիքին...

Մինչդեռ քուբմերը արդէն մի քանի անգամ հաւաքուել էին քրմապիտի մօտ և խնչ-որը սնի մասին խորհրդակցում էին նորա հետո Եւ ահա, մէկ անգամ առաւօտեան, ծերանի քուբմը յայտնուեց պարաւում և, հանդիպելով մէծ յարգանքի —տէրութեան մէջ քուբմուրը ստատիկ ազգեցութիւն ունէին, —ուզգալի թագաւորի մօտ պնաց:

Ծերունի քաւլը շատ վրդովուած էր և
ելաւ թագաւորին նախազգուշացնելու, որ
մարդկանց խօսեցութիւնը երկնքի հետ կա-
յազ է վաս հետեւաքների հասցնել:

ի՞նչ է նշանակում այդ բոլորը։ Առ չեմ
կարողանում հասկանալ...—մուայլուած ասում
եք ծերունի քուրմբ։—Մեր տաճարները օրէ



օր աւելի ու աւելի են դատարկում:

—Այն, ինչ որ դու ասում ես, բարեկամ, շատ կարեոր է, —պատասխանեց ծերունի թագաւորը: —Այդ միասին պէտքէ մտածել... Եկ այսօր երեկոյեան ազօթքից յետոյ քուրմերի հետ միասին ինձ մօտ, և մենք կը խօսենք:

—Ես կարծում եմ, մեծ թագաւոր, որ միայն հարկաւոր է փոխել քո հրաժանը՝ աստղերի դադանիքը մեկնել, —պատասխանեց ծերունի քուրմը: —Եւ ոչ միայն նորան փոխել, —այդ քիչ է. —պէտքէ արգելի մարդկանց՝ երկինքը նայել առհասարակ:

—Բայց դու մօւանում ես իմ երազի մասին... պատասխանեց թագաւորը: —Ինձ հարկաւոր է իմանալ, թէ ինչ է սպասում իմ ժողովրդին...

Քրմապետը աշքերը ցած դցեց, կարծես թէ թոյլ տուեց թագաւորին հասկանալ, որ ինքը չէ հաւատում նորա երազին, և խուլ ձայնով, խորը թագցրուած զայրոյթով խօսեց մի փոքր լոռովիւնից յետոյ.

—Քուրմերը տրանջում են, մեծ թագաւոր:

—Պէտք է մտածել... պատասխանեց թագաւորը: —Իսկ երեկոյեան եկ ինձ մօտ նորանց հետ միասին, —կը խօսակցենք, կը տեսնենք, թէ ինչ բան մենք պէտք է ձեռնարկենք:

Քրմապետը շառարկեց և, լուռ՝ գրուի տալով թագաւորին, ի նշան հնազանդութեան, սառն և հպարտ կերպով հեռացաւ պալատից

Նոյն օրուայ երեկոյին, աղօթքից յետոյ, երբ հազարաւոր մարդիկ հիացած նայում էին արծաթափայլ երկնի գաղտնիքի խորքը, թագաւորի մօտ հաւաքուել էին քուրմերը, իրանց զուլիս ունենալով զիմաստը քուրմին: Սառն և հպարտ կերպով նորա նստոտեցին պալատի լայն հրապարակի վրայ, և նորանց մռայլ, անշարժ կ'րպարանքները աստղերի թոյլ լոյսի տակ երկում էին քարեայ, սառն քանդակագործութիւններ:

—Մենք քո խօսքին ենք սպասում, մեծ թագաւոր... —խօսեց քրմապետը:

—Դու ինձ ասացիր, բարեկամ, որ երկնիքի մօտիկութիւնը վտանգաւոր է թոյլ մարդկանց համար, —պատասխանեց ծերունի թագաւորը: —Եթէ որ այդ այդպէս է, ես պատրաստ եմ նորանց արգելել աստղերի հետ զրուցիլ Բայց այդ գէպօւմ, դուք, քուրմերդ, պէտքէ իսկոյն եեթ մեկնէք ինձ նորանց գաղտնիքը: Ես կարծում եմ, որ ձեզ համար այդ հեշտ կը լինի, —չէ որ դուք ասում էք, որ դուք մօտ էք երկնիքին... Ի՞նչ է գրուած այնտեղ, —թագաւորը ձեռքով ցոյց տուեց մութ բարձրութիւնը, որտեղ, անսահմանութեան մէջ սըփուուած, հեղութեամբ վառուում էին Անհասանելիի սեղանի առաջ ոսկեղէն ճրագները: —Ի՞նչ են նշանակում այդ ոսկեղէն զրերը...

—Այդ միայն աստղեր են, թագաւոր,

սառնութեամբ պատասխանեց քուրմը, —և նորանց հրաշալի նկարների մէջ նչ մի գաղտնի միտք չը կայ. և եթէ որ նա լինի էլ, մարդկային թոյլ խելքի ոյժը չէ կարող նորան գուշակել:

—Եթէ նորանց մէջ միտք չը կայ, կամ եթէ այդ միտքը մարդկային ոյժերից վեր է, էլ ինչո՞ւ համար էք դուք այդպէս վախենում մարդկանց՝ երկնքին մօտենալուց, —ասաց թագաւորը:

Ծերսունի քուրմը վրդովուեց:

—Նա ստիպում է նորանց մօռանալ Աստծուն...

—Աստուծոյ երկինքը, —հարցրեց թագաւորը:

—Աստուծոյ տաճարները գատարկւում են...

—Բացադրի՛ր ինձ, ինչից է... —պատասխանեց թագաւորը: —Նշանակում է երկնքում մի ինչ-որ բան կայ, որ ստիպում է մարդկանց մօռանալ երկրի մասին:

Քուրմը սիջոց շունեցաւ պատասխանելու, որովհետեւ այդ բողէին հրամարակը եկաւ թագուսիրի ծեր սպասաւորը և ասաց.

—Մեծ թագաւոր, մի ինչ-որ ճանապարհորդ, ամբողջութիւն փոշու մէջ, ցանկանում է հէնց հիմա խօսել քեզ հետ:

—Թող ներս դայ:

Սոլասաւորը զլուխի խոնարհելով հեռացաւ և խկայն հրամարտելը ներս մտաւ մի մարդ և կանգնեց անվճռողականութեան մէջ ողուարտի մէջ դրառն մրամի բար:

—Մօտ եկ, բարեկամ, -սիրալիք կերպով ասաց թագաւորը: Մութ ստուերը մօտեցաւ այն տեղին, որտեղ նստել էին քուրմերը և թագաւորը:

—Դու ով ես, —ասաց թագաւորը:

—Ես զինուոր էի, բանտում պահպան, ... —պատասխանեց ուրուականը:

—Արգեօք դու հէնց այն մարդը չես, որ սորանից երկու շաբաթ առաջ փախար բանտի պահպանութիւնից:

—Այս, ես հէնց այն եմ, —պատասխանեց ուրուականը: —Դու կարող ես ինձ յետոյ պատժել փախտախիս համար, բայց նաև լինք. —Ես իմացայ երկնքի գաղտնիքը...

—Այդ ես, զիտեմ..., —հանդիպարտ խօսեց ծերունի թագաւորը:

—Գիտե՞ս, —զարմացած կրնեց փախըստականը և խկայն ուրախութեամբ աւելացըրեց. —Ես այդ կարծում էի... ինձ այնպէս եր թւում, որ զիտեմ..., որովհետեւ դու ստիպեցիր մարդկանց նայել երկնքը, —Նշանակում է, դու զիտէիր նորա գաղտնիքը և ուզում էիր, որ ամէնքը զիտենան նորան... Այս, այս, որովհետեւ անկարելի է, մէկ անգամ նորան գիտենարվի, նորան մարդկանցից թագնել —անկարելի է...

—Բայց պատմիր մեղ, թէ ինչպէս այդ եղաւ... —ասաց թագաւորը:

—Լսեցէք, որովհետեւ այդ մասին պատմելը այժմ իմ ամբողջ կեանքի խորհուրդն է կողմում, —պատասխանեց նորեկը: —Լսեցէք...

VII

Այն օրուայ երեկոյեան, երբ բոլորին տրուեց թագաւորական հրամանը՝ գուշակել երկնքի գաղտնիքը, —սկսեց նորեկը, թիկն տալով մարմարեայ սիւնի վրայ, —բոլոր բանտարկեաները գուրս բերուեցին բանտից և ստորերկեայ նկուղներից բակը, որտեղից նորանց երեռում էր ամբողջ երկնքը. իսկ պահապան զինուորները կանգնած էին պարիսպների մօտ: Ես կանգնած էի անկիւնաւոր աշտարակի վրայ, բարձր բարձր՝ երկրից, որը փոռւած էր ոտքերիս տակ լուռ և խաւար, ինչպէս անդունդ, և նայում էի աստղերին: Եւ քիչ-քիչ ս'լսեցի մօռանալ, որ ես պահապան եմ, զինուոր, որ ես կանգնած եմ աշտարակի վրայ. ես ինձ կտրուած էի զգում երկրից, միայնակ՝ այդ աստղային շրջանների միջն, և ես ինձ մի տեսակ ծանր ու տանջուելու չափ տխուր զգացի... Եւ չէի հասկանում, թէ ինչո՞ւ համար ես ինձ այնպէս տխուր էի զգում աստղերի մէջ, և այդ մասին հարցրի նրանց, և չը հասկացայ այն, ինչ որ նոքա այնպէս քնքոյց կերպով փսփացին ինձ: Իսկ ինչ էին նոքա փսփառմ, խօսում ինձ հետ—ես այդ զգում էի, իմանում և ձնում էի հասկանալ, բայց չէի հասկանում, և ես աւելի ու աւելի էի տխրում: Եւ աստղերի աշխարհից ես հայեացքս դարձրի ինձ վրայ ու որքան փոքր, ողորմելի ու կեդոտու երեաց ինձ իմ հոգին՝ համեմատած այն բոլոր հրաշալիքների

հետ... իմ ամբողջ կեանքը պատկերացաւ իմ առաջ և ես ամօթ զգացի նորա համար, ամօթ՝ ինձ համար: Եւ ես միայն իմացայ, թէ որքան յանցաւոր եմ, և այդ ժամանակ աստղերը աւելի պայծառ փայլատակեցին ու խաղացին. խաղացին—կարծես թէ ուրախացան, որ ես այդ իմացայ: Եւ հս լի հիացմունքով կրկին նայեցի նորանց, մօռանալով ամէն ինչ... Եւ յանկարծ—ներքիւմ լսելի եղաւ շղթաների շառաչիւն: Ես սարսեցի, ուշքի եկայ և նայեցի դէպի երկիր, որի մասին համարեայ թէ մօռացել էի: Այնտեղ, մութ բակում, որը պատած էր քարեայ բարձր պարիսպներով, կանգնած էին մարդիկ, անթիւ մտրդիկ: Նորանց երեսները գարձրած էին դէպի երկինք և նոքա, լուսաւորուելով աստղերի թոյլ լուսով, դունատ էին երեսում ինչպէս մեռելներինը, կամ աւելի ճիշտը՝ ինչպէս ասկեաներինը, սուրբ ճգնաւորներինը: Այն, այն—ինչպէս սըրբերինը... Դուք երբեմից նկատել էք, որ ամենահասարակ, սովորական դէմքը մի անսովոր բան է գառնում, երբ մարդ վերև է նայում... Կարծես երկնքի լուռ մտորմունքը արտացոլում է նորանում... Նոյն բանն էր կատարում և այդ մարդկանց հետ.—որքան տխուր, հանգիստ, գեղեցիկ էին նորանց բոլորի դէմքերը նորից թոյլ կերպով շառաչեցին նորանց զլթաները, և ես ցաւ զգացի, տանջուելու չսփառեցի:—ինչո՞ւ համար են նոքա կապանքների մէջ, այս գեղեցիկ, հրաշալի դէմքերով մար-

դիկ. ինչու համար են նորանց չարշարում և ովքեր են նորա... Այդ ինչ պատահեց.. Պատասխան փնտրելով՝ աչքերս դէպի երկինք բարձրացրի. —բոլոր աստղերը զողանջում էին հանդարտ, ուրախ ծիծաղով, սիրախիր կերպով շոյում էին իրանց բարակ, քնքոյշ ձառագայթներով և ուրախանում, ուրախանում էին անվերջ: Եւ յանկարծ իմ կրծքից մի ինչոր տարօրինակ ծիծաղ դուրս պրծաւ և աչքերից արցունք հոսեց...

Այդ ժամանակ կէս գիշերի գանգը խփեց: Պէտք էր բանտարկեալներին փակել նկուզներում և գնալ քնելու. —կէս գիշերին պահապահները փոխում են: Բայց ես չը գնացի քնելու, այլ մենակ մնացի գառարկ բակում և, թագնուելով բարձր պարսպի ստուերում, նայում էի երկնքին ու մտածում, և յանկարծ յիշեցի քո երազի մասին, թագաւոր, երկնքի գաղոնքի մասին, որը պէտք էր գուշակել:

Ես իմացայ... ոչ, զգացի այժմ, թէ ինչումն է այդ գաղտնիքը. —ես նորան լսեցի երկնքում, տեսայ այն բոլոր դէմքերի վրայ և զգացի իմ սրտում: Բայց ինձ համար քիչ էր միայն զգալ ինքս իմ մէջ և բոլոր շրջապատիս մէջ, ինձ հարկաւոր էր ասել այդ մասին մարդկանց, նորանց մեկնել երկնքի գաղտնիքը, գրանել հարկաւոր խօսքը... Գաղտնիքը պահանջում էր իւր մեկնութիւնը...

Սրեածագին ես պէտք է նորից գնայի պահպանութեան, բայց, ձեռքս առնելով սուլը

որպէս զի մէջքիս կասիմ, ևս մասքիքեցի բանտարկեալների գունատ դէմքերը և զէնքո տուեցի ընկերոջս, իսկ ինքս բանտից փախայ, ուր աչքերս կտրում էին... Ես շատ օքեր թափառեցի այլրի անապահների և մարդկանց մէջ և միշտ մտածում էի, մտածում, մինչև որ փերջապէս գտայ այդ բառը:

—Այդ բառը, —հանդիսա կերպով հարցըրեց թագաւորը:

—Մէր!

Ծերունի թագաւորը արագ վեր կացաւ իւր տեղից, մօտեցաւ փախստականին և զրբկեց նորան:

—Գու գուշակեցիր... —զգացուած ասաց նա: —Ո՞հ, մէկը, միայն մէկը բոլորից...

—Ո՞չ, թագաւոր... —արագ պատասխանեց նա: —Ալոքէն շատերը, շատերը այդ գիտեն, շատերը հասկացան այն, ինչ որ ասում են ասուղերը, որ կեանքը սէր է, որ սէրից գուրս չը կայ կեանք, —սէր գէպի ամէն ինչ, անմիք սէր... Հասկացան, որ մենք բոլորս պէտքէ նրանուենք աստղերին, լինենք այնպէս պարզ, հանդարտ, հեղ, և մեր հոգիների ճառապայթներով սիրալիր կերպով միաւորուենք միմիանց հետ, աստղերի հետ, ամբողջ աշխարհի հետ...

—Բայց ինչու են նորա լուում, —յուզուած բացականչեց թագաւորը:

—Նոքա շն լուում, խօսնում են, —պատասխանեց նորեկը: —Բայց գեր բոլորովին չեն հաւատում իրանց, —չէ որ ամէն մի հին բան

խորտակում է։ ԶԵ որ պէտք է ճիգ դործ դը-
նել, որպէս զի վերածնուել այս նոր կետն-
քում... Նաև բան պէտք է յաղթել...

—Եւ նոքա կը յաղթեն։

—Այս...
Տիրեց կարճ, յուզուած լոռութիւն։

—Իմ գերութները պարզե են խօստացել
դադանիքը իմանալու համար...-խօսեց թագա-
ւորը, նորեկին փորձելով։

Նա կամաց ծիծաղեց՝ պատասխան տա-
տալու փոխարէն։

—Բայց ինչ կարող ես գու ինձ տալ...-
ասաց նա։—ԶԵ որ ինձ, քնից զարթնողիս,
պատկանում է ամբողջ աշխարհը։

Յանկարծ մութ ստուէրներից մէկը ա-
րագ կերպով տեղից վեր կացաւ։

—Նա ճշմարիտ է...-աղաղակից երի-
տասարդ քուրմերից մէկը, խաւարի մէջ փայ-
լեցնելով իւր աչքերը։—Նա ճշմարիտ է...
Այս անսպասողութիւնից ուշաթափուած՝
քուրմերը վեր թռան իրանց տեղերից և հար-
ձակուեցին յանդուզն մարդու վրայ, կարծես
ուզենալով հանդցնել խաւարի մէջ լուսող նրա-
քորբոքուող խօսքերի կրակը։

—Ուշքի եկ, յիմար, —այդ ի՞նչ ես անում...
Լոիր... Դու գժուել ես...-լուսեցին կատա-
դած, չար աղաղակներ։—Լոիր, լոիր...

—Նա ճշմարիտ է...-գուաց իր գրաց
հարձակուող մութ ստուէրների վրայ երիտա-
սաբդ քուրմը։—Այդ բոլորը ես կարգացի եր-

կնքում և մարդկանց մէջ ու իմ սրտի մէջ, բայց
վախենում էի խօստովանուել ինձ գորանում,
չէի հաւատում ինձ, որովհետեւ այդ կարելի է
խօստովանուել, միայն ինձ դատապարտելով.
իսկ այդ ամէն մարդ չէ կարող անել։—Դու
ճշմարիտ ես, բարեկամ... Այս, կնանքը սէր է
և այս ամէնը, ինչ որ սէր չէ, նա սուտ է,
խարեւայութիւն է, մառախուղ է... Ամէն
ինչ... Սիրիք ամէնքին և ամէն ինչ, ների ա-
մէնքին և ամէն ինչ—դորանումն է ամբողջ
որէնքը և մարդարէութիւնները...
—Մօլորուած, —որոտացին քուրմերը։—
Վատանգաւանք մօլորութիւնն...
Եւ յանկարծ բոլորը քարացան։

—Ի՞նչ պատահեց...
VIII

Ծառերի մութ ըների ետևից դէպի աս-
տղերի բարձրութիւնը հնչեց մի՛ երիտասարդ,
մաքուր, ինչպէս լեռնային աղրիւր, լի անսահ-
ման հիացմունքով՝ ձայն։

Եւ համարեայ նոյն ակնթարթում, —
կարծես դորան էլ հէնց սպասում էին նոքա, —
նոքան միացան բազմաթիւ ձայներ և ամբողջ
քաղաքը յանկարծ թնդաց աստուծավին հին-
օրհնարանութեան հանդիսաւոր ներդաշնա-
կութեամբ։

—Վերջապէս...—աղաղակեց թագաւորը։
—Ո՞հ, եղբայրներ...—զգացուած շնչաց
երիտասարդ քուրմը, ձեռքերը դէպի երկնային

կեդէն զրելի միտքը, այլ բոլորին թուաց, որ
ամբողջ երկինքը ընդգրկուած է և դողմամ է
անսահման հիացմունքով: Փայլիլուն մօլորակ-
ները փառահեղ կերպով վառւում էին նորանց
տաջե անսահմանութեան մէջ, և այդ օպաչին
դիկեցիկ նուերից իւրաքանչիւրը, որոնք նըմա-
նում էին թանկագինքարերի, իր վկաց բար-
ձած տանում էր բիւրաւոր կենդանի արարած-
ներ, մաքերի, զգացմունքների և տեհանքնե-
րի մի ամբողջ աշխարհ, և վառւում էր սիրով,
կենդանի, գեղեցիկ կեանքով... Եւ մարդկանց
թուաց, որ այդ գիշեր բոլոր այդ բիւրաւոր ճը-
րագների վրայ գտնուող բիւրաւոր արարած-
ները կիմանան, կըզգան այն, ինչ որ իմանում
և զգում էին այժմ նորանց մարդկաշին փոքրիկ
արակերը.—կեանքի դիկեցիկութիւնը և բարու-
թիւնը, նորա անսահման ուրախութիւնը: Եւ
նորա բոլորը—այն հեռաւոր, բայց մօ-
տիկ, հաւագանելը,—միասին հաւա-
րուեցին, իւրաքանչիւրը իր ասադի վրայ, բոլորը
տօն օրուոյ հաղուստներում, ծաղիկների մէջ,
և կըար էին մեկնում անսահմանութեան մըջից
ձեռքերը, սիրով, կաչող մեռքերը, և նուազների
հետ միասին երդում էին կեանքի, սիրոյ և այդ
կեանքի Ազրիւրի հրաշալի օքննանքներ—Սի-
րոյն, Ամենակարսղին, Անհատանելիին: Այն
ամբողջ աշխարհի տանն էր, բոլորի, ինչ որ նո-
րա վրայ ապրում և չնշում է...

— 28 —
աղաղակներով լի խաւարը մեկնելով:—Ո՞րպիսի
երջանկութիւն...

Հանդիսաւոր, երկնային աղաղակները հե-
տպհետէ սաստկանում և սաստկանում էին ան-
վերջ... Թւում էր, որ մարդկային հոգին յան-
կարծ զարթնեց երկրային կեանքի խորը քնից
և հանդիսաւոր աղաղակների մըրկի միջոցով՝
պարզ, հանդիսաւոր կերպով դիմում էր դէպի
երկինքը: Եւ զմայլուած, յափշտակուած այդ
մարդկային թուիչքով, երգում էր, կարծես, ամ-
բողջ երկինքը, երգում էին ծառերը, ծաղիկները,
շատրուանները, քարերը, ամոլերը, երգում էր
ամեն ինչ, ինչ որ ապրում է, ամէն բան, ինչ
որ գոյութիւն ունի...

Ինչ որ սաստուածային, սարսափելի բան
կար մարդկանց այդ թուիչքի մէջ՝ դէպի ան-
սահմանութիւն...

«Հայր, Քեդ գովասանք ենք երգում, Քեզ,
Միածնիգ,»—որոսում էին չերեցող երգեցիկ
խմբերը:—«Ամենաբարի Աստուած, ներիք մեզ
մեր մօլորութիւնները, թուլութեան և տրամու-
թեան բատէին մի՛ թող մեզ... Ամբողջ աշխար-
հը—Քո թագաւորութիւնն է, Զգօր Աստուած.
Նրա մէկ օրէնքը դարից—դար է. ճշմարտու-
թեան օրէնքը—Քո կամքն է: Երջանկութիւ-
նը—միմիայն Սէրն է...»

Աղօթքի հնչիւնները թնդիւնով բարձրա-
նում էին դէպի փայլատակող երկինքը և ծե-
րունի թագաւորին ու այդ բոլոր հաղարաւոր
մարդկանց, որոնք, վերջապէս, գուշակեցին ու-

և նորա պրատակ գեղական ճանաւել
ձամբաւութիւնը, աշխափնը լուսաւորոց ալդ
ըգույշը զգաւուած ունիւ ոչ զգաւուած
...զարդարուած ուսու հրձը

սիրոյ փայլի մէջ ի հացան, որ իրանք մեռած էն, և, գիտենալով այս, նկատում էին իրենց հոգիներում յարութեան արշալու...

Օրհնաբանութիւնը հազիւ լուեց, երբ ծերունի թագաւորը, մօռանալով իր տարիքի մասին, դուրս վազեց փողոց՝ մարդկանց մօտ։ Հասնելով լայն, մարմարեայ սանդուխքին, որը տանում էր հրապարակից պալատ, նա տեսաւ այն, ինչ որ ցանկանում էր.—Երջանկութեան ծիծաղի և ողջոյնների մէջ՝ մարդիկ փոխանակում էին եղբայրական համբոյրներով...

—Կատարուեց... — աղաղակից թագաւորը և աչքերը դէպի երկինքը բարձրացնելով՝ զգացուած խօսեց.—Նորհակալ եմ Քեզանից, Ամենակարող Աստուած, այն բաղդաւորութեան համար, որ դու պարգևեցիր ինձ,—այն ուրախութեան համար, որ տեսնում եմ եղբայրներիս-մարդկանց երջանկութիւնը...

Եւ, թողնելով իր մարմարեայ պալատը, ծերունի թագաւորը աննկատելի կերպով անյայտացաւ գիշերային մթութեան մէջ...

Եւ այլեւ ոչ ոք ոչ մի անդամ շէ տեսել նորան...

* *

Սերունի, խելացի Երն-Ալ-Նաման ոէիդը լուեց, և ուղղելով խարոյկի արդէն փառուած ածուխները, իւր տխուր հայեացքը դարձեց դէպի լուռ անապատը...

—Բայց ինչու համար մարդիկ դարձեալ մօռացան երկնային օրէնքի մասին,—հարցը ես, քիչ լուսնիւնից յետոյ։—Ինչու համար նոքա այլեւ եղբայրներ չեն...

—Նորս համար, որ նոքա արդէն դադարեցին աստղերին նայելուց, կարծելով, որ այդ այլեւ հաւաքաւոր չէ...—պատասխանեց նա։—Խակ յետոյ երկրային գործերը նորանց կամաց-կամաց նորից գրաւեցին, նորից մէկ հարկաւոր, հաւաքանական օրէնքի տեղ նոքա անթիւ անպէտք օրէնքներ գրին և նորանցով խորտակեցին կեանքը..., Բայց, —շարունակեց ծերունի արաբը, և նորա ձայնը աւելի տաքացաւ, —կը գայ ժամանակ, և, շատ կարելի է, այդ հեռու չէ, որ նորից մարդկանց միջից առաջ կը գայ մի սուրբ մարդ, որպէս զի յեցնէ նրանց ոսկեցին աստղերի օրէնքների մասին, որպէս զի փրկէ նրանց... Եւ այդ կը լինի արդէն ընդմիշտ...

—Կը լինի արդեօք, —կամաց հարցը ես։—Նայիր դիմի երկինք...—պատասխանի փոխարէն, խաղաղ ժպիտով ասաց սէկիք...

Ես աչքերս բարձրացը դէպի լուռ, խաւար անսպատի վերեւում փայլատակող երկինքը և խոկոյն խմացայ, որ կը լինի...

(Անթ)



Գրքոյիս ստանալու համար պէտք է
գիմել՝ Տիֆլիս Սաբերնա, 37.
Վանս Տեր-Աբրամյանց.

Յումարով զնողներին 30% զիչու:

(111).

ՀՀ Ազգային գրադարան



NL0319806

12282

